N42-26

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ /ԱՆՏԵՆԱՅԻՆ ԷՏԱԼՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ/ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-26/16

ք. Երևան «27» 04 2026 թ.

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար **Հ. Նասիբյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, **և «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն**, ի դեմս **տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Հ. Զեյնալյանի,** որը գործում է, ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշումը («1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր» 11010 միջոցառում), ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 772-Ն որոշումը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում **մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայության/անտենային էտալոնների պահպանում և զարգացում/** մատուցում համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3), ծրագրի ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման ժամանակացույցը 2 օրինակ (հավելված N 4), եզրակացություն պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ (հավելված N 5), հաշվետվություն (հավելված N 6):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 37 400 000 (երեսունյոթ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և տարածվում է 2026թ. հունվարի 5-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն

չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1, N 4, N 5, N 6 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«Ստանդարտացման և չափագիտության
Հասցե՝ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5	ազգային մարմին» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխ. գործառնական վարչություն	Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 49/4
Հ/Հ 900011010403	Ամիո բանկ ՓԲԸ, Մերգելյան մ/ճ
ՀՎՀՀ 02698604	Հ/Հ 1150012490810100
	ՀՎՀՀ 00219641
գլխավոր քարտուղար՝ Հ. Նասիբյան	տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Հ. Զեյնալյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
27 «04 .2026 թ. կնքված
ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-26/16 *ծածկագրով*
պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	անվանումը գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը դրամ	Ընդհանուր քանակը	այլ տվյալներ	
						հասցեն	աշխատանքների կատարման ժամկետը
1	Մասնագիտական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություն 98111120/1	Կատարողը պետք է ապահովի անտենային էտալոնների (այլ ազգային չափանմուշների) պահպանումն աշխատունակ վիճակում՝ գիտատեխնիկական պահանջներին համապատասխան, որը թույլ կտա ալեհավաքների չափագիտական աշխատանքներում (երկրորդային էտալոնների և օրինակելի սարքերի որակավորում) ապահովել բարձր ճշտություններ, որի համար անհրաժեշտ է. 1. Պարբերաբար կատարել բոլոր սարքերի և հանգույցների պրոֆիլակտիկական ստուգումներ, դրանց բնութագրերի չափում և ապահովել չափագիտական որակավորում. 2. Իրականացնել բնապահպանական հետազոտություններ: Էկոլոգիական սարքաշինության բնագավառում չափագիտական տիրույթների և սկզբունքների հետազոտություն և մշակում. 3. Մշակել նոր արդյունավետ մեթոդներ (սարքեր)՝ ուղղված էտալոնների պարամետրերի ճշտության բարձրացմանն ու պահպանմանը. 4. Մշակել չափման արդյունքների վիճակագրական մշակման մեթոդներ և իրականացնել	դրամ	37400000	1	ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով համայնքի թիվ 2 փողոց 27	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 2026 թ. դեկտեմբերի 30-ը

		համապատասխան ծրագրային ապահովում. 5. Իրականացնել սարքավորումների պարբերական կատարելագործում, զգայունությունների բարձրացում՝ հաշվի առնելով ալեհավաքների պարամետրերի չափման ճշտության բարձրացման ժամանակակից պահանջները. 6. Մշակել և ձևակերպել գիտահետազոտական աշխատանքների արդյունքները. 7. Մշակել անտենային էտալոնների և այլ ազգային չափանմուշների (ընդունված և շահագործվող ազգային չափանմուշների քանակը՝ 14 հատ) պահպանման և զարգացման աշխատանքների վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններ և ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը. 8.Ապահովել չափման ճշտությունների միասնականությունը 100 տոկոսով:					

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 6-ի № 772-Ն որոշման և ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ նշված գործունեությունն ազատված է ԱԱՀ վճարումից:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
ՀՀ ՖՆ աշխ. գործառնական վարչություն
Հ/Հ 900011010403
ՀՎՀՀ 02698604

գլխավոր քարտուղար՝ Հ. Նասիբյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 49/4
Ամիո բանկ ՓԲԸ, Մերգելյան մ/ճ
Հ/Հ 1150012490810100
ՀՎՀՀ 00219641
տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Հ. Զելնայան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
27.04 .2026 թ. կնքված
ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-26/16 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության																
Չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Տնտեսագիտական դասակարգիչ	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
	98111120/1	Մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություն/անտենային էտալոնների պահպանում և զարգացում	4239	-	-	-	18 700 000	18 700 000	18 700 000	28 050 000	28 050 000	28 050 000	37 400 000	37 400 000	37 400 000	37 4000 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
ՀՀ ՖՆ աշխ. գործառնական վարչություն
Հ/Հ 900011010403
ՀՎՀՀ 02698604

գլխավոր քարտուղար՝ Հ. Նասիբյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 49/4
Ամիո բանկ ՓԲԸ, Մերգելյան մ/ճ
Հ/Հ 1150012490810100
ՀՎՀՀ 00219641
տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Հ. Չեյնալյան

ստորագրություն
Կ.Տ.

Հավելված 3
27 «04 .2026 թ. կնքված
ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-26/16 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » *20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«22» 04 2026 թ. կնքված
ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-26/16 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
27.04 .2026 թ. կնքված
ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-26/16 ծածկագրով
պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ — ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Կազմակերպության անվանումը՝ — «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ

Ծրագրի անվանումը՝ — Պետության կարիքների համար մասնագիտացված կազմակերպությունների կողմից /անտենային էտալոնների պահպանում և զարգացում/ ծառայությունների մատուցում

Ծրագրի համառոտ նկարագրություն	Միջոցառման ցուցանիշի անվանումը	Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի ընթացքում (աճողական)			
		I եռամսյակ	I կիսամյակ	ինն ամիս	տարի
		քանակը	քանակը	քանակը	քանակը
1	2	3	4	5	6
Անտենային էտալոնների և ազգային չափանմուշների պահպանման և զարգացման. «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի գիտական կենտրոնում, որը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով համայնքի թիվ 2 փողոցի 27 հասցեում, գործում են ԳԷՊԻ-0,25; ԳԷՊԻ -0,5; ԳԷՊԻ-1; ԳԷՊԻ-2 ալեհավաքների էտալոնները,	**1. Ընտրված կազմակերպությունների թիվ (հատ)**		1		1
	Սույն ցուցանիշի կատարումն ապահովելու նպատակով ընտրված կազմակերպությունը պարտավոր է՝ 1.1. Պարբերաբար կատարել բոլոր սարքերի և հանգույցների պրոֆիլակտիկական ստուգումներ, դրանց բնութագրերի չափում և ապահովել չափագիտական որակավորում.				
	1.2. Իրականացնել բնապահպանական հետազոտություններ, ինչպես նաև էկոլոգիական սարքաշինության բնագավառում չափագիտական տիրույթների և սկզբունքների հետազոտություն և մշակում.				

որոնք ապահովում են մինչև 3մ տրամագծով ալեհավաքների պարամետրերի չափման միասնականությունը: Կատարողը պետք է ապահովի էտալոնների պահպանումն աշխատունակ վիճակում՝ գիտատեխնիկական պահանջներին համապատասխան, որը թույլ կտա ալեհավաքների չափագիտական աշխատանքներում (երկրորդային էտալոնների և օրինակելի սարքերի որակավորում) ապահովել բարձր ճշտություններ:	*1.3. Մշակել նոր արդյունավետ մեթոդներ (սարքեր) ուղղված էտալոնների պարամետրերի ճշտության բարձրացմանն ու պահպանմանը.*				
	1.4. Մշակել չափման արդյունքների վիճակագրական մշակման մեթոդներ և իրականացնել համապատասխան ծրագրային ապահովում.				
	1.5. Իրականացնել սարքավորումների պարբերական կատարելագործում, դրանց զգայունության բարձրացում՝ հաշվի առնելով ալեհավաքների պարամետրերի չափման ճշտության բարձրացման ժամանակակից պահանջները.				
	1.6. Մշակել և ձևակերպել գիտահետազոտական աշխատանքների արդյունքները:				
	2. Ապահովել չափման ճշտությունների միասնականություն (%)		**100**		**100**
	3. Ընդունված և շահագործվող ազգային չափանմուշների քանակը (հատ)		**14**		**14**
	3.1. Սույն ցուցանիշի կատարումն ապահովելու նպատակով կազմակերպությունը պարտավոր է իրականացնել անտենային էտալոնների, ինչպես նաև ընդունված և շահագործվող այլ ազգային չափանմուշների պահպանման և զարգացման աշխատանքներ, կազմել հաշվետվություններ և ներկայացնել էկոնոմիկայի նախարարությանը:				

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
ՀՀ ՖՆ աշխ. գործառնական վարչություն
Հ/Հ 900011010403
ՀՎՀՀ 02698604
գլխավոր քարտուղար՝ Հ. Նասիբյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 49/4
Ամիո բանկ ՓԲԸ, Մերգելյան մ/ճ
Հ/Հ 1500012490810100
ՀՎՀՀ 00219641
տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Հ. Ղեղնայան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 5
2026 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

N ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-26/16 «27» 04

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2017 թվականի մայիսի 20-ի
N 228-Ն հրամանի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

« » « » 2026 թ.

Պայմանագրի անվանումը՝ **Մասնագիտացված կազմակերպությունների կողմից «Անտենային էտալոնների և այլ ազգային չափանմուշների պահպանման և զարգացման» մատուցման պետական գնման պայմանագիր**

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » **2026 թ.**

Պայմանագրի համարը **ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-26/16**

Պատվիրատուի անվանումը **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**

Պայմանագրի կողմի անվանումը **«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերություն**

Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում կատարողը իրականացրել է հետևյալ աշխատանքները (մատակարարումներ, ծառայություններ)՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների					
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը	
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի
	մասնագիտացված կազմակերպությունների կողմից/ անտենային էտալոնների և այլ ազգային չափանմուշների պահպանման և զարգացման	Կատարողը պետք է ապահովի էտալոնների և այլ ազգային չափանմուշների պահպանումն աշխատունակ վիճակում՝ գիտատեխնիկական պահանջներին համապատասխան, որը թույլ կտա ալեհավաքների չափագիտական աշխատանքներում (երկրորդային էտալոնների և օրինակելի սարքերի որակավորում) ապահովել բարձր ճշտություններ, որի համար անհրաժեշտ է.				
		1.Պարբերաբար կատարել բոլոր սարքերի և հանգույցների պրոֆիլակտիկ ստուգումներ, նրանց բնութագրերի չափումներ և ապահովել չափագիտական որակավորում:				
		2.Բնապահպանական հետազոտություններ: Էկոլոգիական սարքաշինության բնագավառում չափագիտական տիրույթների և սկզբունքների հետազոտություն և մշակում:				

	3. Նոր արդյունավետ մեթոդների և սարքերի մշակում՝ ուղղված էտալոնների պարամետրերի ճշտությունների բարձրացմանը և պահպանմանը:				
	4. Չափման արդյունքների վիճակագրական մշակման մեթոդների մշակում և համապատասխան ծրագրային ապահովում:				
	5. Սարքավորումների պարբերաբար կատարելագործում, զգայնությունների բարձրացում ՝ հաշվի առնելով ալեհավաքների պարամետրերի չափման ճշտությունների բարձրացման ժամանակակից պահանջները				
	6. Գիտահետազոտական աշխատանքների արդյունքների մշակում, ձևակերպում				
	7. Անտենային էտալոնների և այլ ազգային չափանմուշների (ընդունված և շահագործվող ազգային չափանմուշների քանակը՝ 14 հատ) պահպանման և զարգացման աշխատանքների վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունների մշակում և ներկայացում ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը		14		14
	8.Ապահովել չափման ճշտությունների միասնականություն (%)		100		100

Նշումներ հանրային հսկողություն իրականացնող անձի կողմից ներկայացված դրական դիրքորոշման վերաբերյալ՝

Նշումներ անհամապատասխանությունների մասին՝

_____

_____

_____

_____

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ _____ եզրակացություն:

(դրական/բացասական)

« » « » 2026 թ. Գնման հայտը նախագծած ներկայացուցիչ՝ _____

ստորագրություն անուն-ազգանուն,

Ընդ որում սույն հավելվածով սահմանված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացության ձևը լրացվում է հետևյալ կերպ՝

1. Սյունակի «քանակական ցուցանիշը ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի» բաժնում լրացվում է պայմանագրով նախատեսված և տվյալ ժամանակահատվածում ձեռքբերման ենթակա ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների քանակական ցուցանիշը:

2. Սյունակի «քանակական ցուցանիշը փաստացի» բաժնում լրացվում է տվյալ ժամանակահատվածում պատվիրատուի ընդունմանը ներկայացված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների քանակական ցուցանիշը:

3. Սյունակի «կատարման ժամկետը ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի» բաժնում նշվում է տվյալ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման համար պայմանագրով սահմանված ժամկետը:

4. Սյունակի «կատարման ժամկետը փաստացի» բաժնում նշվում է տվյալ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման փաստացի ժամկետը:

5. Կատարված աշխատանքները, մատուցված ծառայությունները և մատակարարված ապրանքները՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին, քանակական ցուցանիշներին և գնման ժամանակացույցին համապատասխանելու դեպքում «Նշումներ անհամապատասխանությունների մասին» բաժնում լրացվում են միայն հետևյալ բառերը՝ «անհամապատասխանությունները բացակայում են», հակառակ դեպքում՝ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները:

6. Սույն եզրակացությունը կազմելիս վերջինիս լրացմանը վերաբերվող կետերը օրինակելի ձևից հանվում են:

Հավելված 6
2026 թ. 04 22 -ին
կնքված N ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-26/16 պայմանագրի

Հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
N	
Կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2. Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

2.3. Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն):

2.4. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.5. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.6. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար: